ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 2122-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2005.12.28/81(453) Հոդ.1584	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	24.11.2005
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	10.12.2005
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	17.12.2005
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	07.01.2006	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՀՀ-ԻՑ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
17 դեկտեմբերի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2005 թվականի N 2122-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետություն մշակաբույսերի սերմերի ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2005 թ. դեկտեմբերի 10
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
նոյեմբերի 24-ի N 2122-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետություն մշակաբույսերի սերմերի ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման կարգը:

2. Հայաստանի Հանրապետություն մշակաբույսերի սերմեր ներմուծող և Հայաստանի Հանրապետությունից դրանք արտահանող իրավաբանական և ֆիզիկական անձինք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լիազորված մարմնի կողմից հաշվառվում են հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանում:

3. Սույն կարգի դրույթները չեն տարածվում գիտահետազոտական աշխատանքների, սորտափորձարկումների և անձնական կարիքների համար Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող մշակաբույսերի սերմերի վրա:

4. Անձնական կարիքների համար մշակաբույսերի սերմեր կարող են Հայաստանի Հանրապետություն ներմուծվել և Հայաստանի Հանրապետությունից արտահանվել՝ գիտահետազոտական աշխատանքների և սորտափորձարկումների համար Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող մշակաբույսերի սերմերի առավելագույն քանակներին համապատասխան:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

5. *(5-րդ կետն ուժը կորցրել է 29.12.11 N 1876-Ն)*

6. Հայաստանի Հանրապետություն ներմուծվում են դրոշմված (կնքված) և պիտակավորված փաթեթներով (տարաներով) սերմերը:

7. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող մշակաբույսերի սերմերի յուրաքանչյուր խմբաքանակ ուղեկցվում է արտահանող երկրի իրավասու կազմակերպության կողմից տրված հետևյալ փաստաթղթերով՝

ա) մշակաբույսերի սերմերի սորտային պատկանելության և որակական ցուցանիշների հավաստագրեր,

բ) ներմուծման բուսասանիտարական հավաստագիր:

8. Մշակաբույսերի սերմերի խմբաքանակը ներմուծման սահմանակետում ենթարկվում է բուսասանիտարական ստուգման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ԲԱՑԹՈՂՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԴՐԱ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Վերջնական նշանակման վայր հասնելուց հետո մշակաբույսերի սերմերի խմբաքանակն անմիջապես բեռնաթափվում է և բաժանվում առանձին մշակաբույսերի սերմերի խմբաքանակների, ստուգվում է դրանց առանձին փաթեթների պիտակների վրա նշված հերթական համարի համապատասխանությունը հավաստագրում (կամ հավաստագրերում) նշված հերթական համարներին:

10. Փոխադրման ընթացքում վնասված, ոչ ճիշտ պիտակավորված, չկնքված փաթեթներն առանձնացվում են: Դրանցում պարունակվող մշակաբույսերի սերմերը Հայաստանի Հանրապետության տարածքում շուկայահանման ենթակա չեն:

11. Հայաստանի Հանրապետություն ներկրված մշակաբույսերի սերմերի խմբաքանակից վերցվում է նմուշ՝ լաբորատոր փորձաքննության և ստուգիչ տեղամասերում ցանքի նպատակով:

12. Մշակաբույսերի սերմերի խմբաքանակից նմուշառումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հայաստանի Հանրապետությունից արտահանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հավաստագրված մշակաբույսերի սերմերի խմբաքանակները:

14. Հայաստանի Հանրապետությունից արտահանվող մշակաբույսերի սերմերի յուրաքանչյուր խմբաքանակ

ուղեկցվում է հետևյալ փաստաթղթերով՝

ա) մշակաբույսերի սերմերի հավաստագիր,

բ) բուսասանիտարական հավաստագիր:

15. Հայաստանի Հանրապետությունից արտահանվող մշակաբույսերի սերմերի խմբաքանակի համար բուսասանիտարական հավաստագիր տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(Հավելվածը փոփ. 29.12.11 N 1876-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թոփուզյան